



ՎԵՆԱՓՆՈՒ ՎԱՋԳԻՆՆ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՅՅԸ ՍՈՒՐԲ ՂԱՋԱՐ

Նրկու հարյուր քառասուն տարիի ի վեր, գեղածիծաղ Վենետիկ լճակին մեջ, Իտալիո ամենեն հուշակավոր Ս. Ղազար հայոց վանքը, փոքրիկ կղզյակի մը մեջ, բարձրաբերձ նոճիներով շրջապատված, ակնարկը դեպի արևելք կուղղի: Սերաստացի Մեծն Մխիթարի ձեռակերտն է ան:

Ամեն տարի, 10—15 հազար օտարականներ կայցելեն հայոց այս վանքը և կհիանան ծաղկազարդ, պտղատու պարտեզներուն վրա, ինչպես թանգարանին, գրադարաններուն, հին ձեռագիրներուն վրա:

Այս վանքը նշանավոր միաբաններ տված է ազգին և գիտնական տեսուչներ Մուրատյան և Ռաֆայելյան բարձրագույն վարժարաններուն: Ինչպես հնախոս Հ. Ղուկաս Ինճիճյան, Հայկազյան վիթխարի բառարանին հեղինակ Հ. Մկրտիչ Ավգերյան, Ալվազովսկի Հ. Գարրիել, մեծ աստվածարան Հ. Ավետիքյան... բանաստեղծ և աշխարհագիր Հ. Ղևոնդ Ալիշան, նշանավոր քերթող և հնդիակ Հ. Կ. Տեր Սահակյան և մեծ ապագա խոստացող Հ. Ներսես Տեր Ներսեսյան և դեռ շատ շատեր:

Այս հուշակավոր վանքը ունի և իր ճյուղը Վիեննայի մեջ. հո՛ն ևս, նշանավոր բանասերներու փաղանգ մը ապրած ու գործած է բանասիրական մարզին մեջ:

...Նրկու տարի առաջ Ս. էջմիածնա Վեհափառ Վազգեն Ա Կաթողիկոսը, Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Տրանսա և Ռուսլիա այցելելիս ետք չկրցավ էջմիածին դառնալ առանց այցելելու Ս. Ղազարու վանքը, ուր պապեր և կայսրներ այցելած էին: Վեհափառ ամենաթերմ պատիվներով ընդունվեցավ, հիացումով այցելեց ամեն տեղ և միաբաններուն մեջ զիս բացակա գտնելով վանք

ըր պատկերացնող բաց-քարտ մը առնելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»-ով Ս. Ղատիկը շնորհավորեց: Վարդապետներու շարքին ամենեն եռանդուն իր երբեմնի աշակերտը գտավ երիտասարդ, խոստովանալից, «Բազմավեպ»-ի խմբագիր Հ. Ներսես Տեր Ներսեսյանը: Իր առաջին խոսքերուն մեջ հիշեց զիս իբրև իր «մտերիմ բարեկամը», որովհետև երբ զինքը վարդապետ օծված տեսա 1944-ին, ըսի Իրեն համարձակորեն՝ «Դուն օր մը Կաթողիկոսական Աթոռին վրա պիտի բարձրանաս»:

...Երիտասարդ Հ. Ներսես Տեր Ներսեսյան վարդապետ՝ Ս. Ղազարու «Բազմավեպ» ամսաթերթին ամենեն հաջող խմբագիրը, ամենեն մերձավորն էր Վեհափառին:

...Վերջերս «Նոր կյանք»-ի մեջ տեսա, որ Երևանի Մատենադարանը Ս. Ղազարու վանքին ստացած է շարք մը նոր գիրքեր, որոնց վերջինն է Հ. Ներսեսի անդրանիկ գիրքը (Առաքել Սյունեցիի Դրախտագիրք), որուն Աղավզիբք 1907-ին, Քերթվածները 1913-ին հրատարակած եմ Ս. Ղազարու մեջ: Առաքել Սյունեցին՝ Քուչակեն փոքր մեր մեծ բանաստեղծն է, որուն շատ մը գրածները ֆրանսերենի թարգմանած է Ա. Չոպանյան 1918-ին:

Հ. Ներսեսի այս հրատարակութունը հրաշալիորեն աշխատված է, Առաքել Սյունեցին՝ Գրիգոր Տաթևացիին ջրոջ տրդին է, ծնած 1330-ի ատենները և ապրած 70 տարի:

Սե՛ծ հուշ ունիմ, որ այս երիտասարդ Մխիթարյանը Չամչյաններու և Ալիշաններու կարգին պիտի բազմի:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐՅԱՆ
(Նյու-Յորք, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ»,
19 ապրիլի 1958 թ., № 16)

